ՀԱՅ–ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XX Դ. ՍԿԶԲԻՆ

Կ. Ս. ՊՈՂՈՍՅԱՆ

Հայ ժողովրդի պատմության դիտարժան էջերից են հայ-քրդական հարաբերությունները, որոնք ունեն ոչ միայն գիտաճանաչողական, այլև քաղաքական-արդիական նշանակություն, նկատի ունենալով քրդերի վիճակը ժամանակակից Թուրքիայում և նրանց դերը ոչ միայն Մերձավոր արևելքի, այլև միջազգային կյանքում։

Դարեր շարունակ հայերի կողքին ապրող այս ժողովրդի որոշակի դերը հայերի համար ողբերգական XIX դ. վերջի—XX դ. առաջին տասնամյակներում ակնհայտ է և չնայած այն բանին, որ քրդական հարցը երբևիցե չի վրիպել մեր պատմաբանների ուշադրությունից, այնուամենայնիվ, այսօր էլ այն սպասում է իր խոր և բազմակողմանի ուսումնասիրությանը։ Բանն այն է, որ հայ-քրդական հարաբերությունները որպես կանոն քննվում են ավանդական սխեմաներով ու բնութագրություններով, քիչ ուշադրություն է դարձվում այդ հարաբերությունների դինամիկային, դրանց մակընթացություններին ու տեղատվություններին, պատճառներին։ Վերջիններս չեն դասակարգվում, ցույց չի արվում, թե որտեղ են վերջանում օբյեկտիվ պատճառները և որտեղ սկսվում սուբյեկտիվ բնույթ կրողները։ Բացի այդ, մեզանում անթույլատրելիորեն քիչ ուշադրություն է դարձվում քրդական հասարակության և քուրդ-թուրքական հարաբերությունների ուսումնասիրությանը։ Այլ կերպ ասած, հայ-քրդական հարաբերությունների պատմությունը հայ պատմագիտությունից պահանջում է ավելի մեծ ջանքեր և ուշադրություն։

Փորձենք հայ-քրդական հարաբերությունները դիտարկել պատմական կարճ ժամանակահատվածում՝ 1900—1905 թթ., և պատմական փաստերի հիման վրա ի հայտ բերել որոշ օրինաչափություններ ու կատարել համապատասխան ընդհանրացումներ։

Խոսելով քննվող ժամանակաշրջանի հայ-քրդական հարաբերությունների մասին, պետք է նկատի ունենալ, որ այն հաջորդում է այդ հարաբերությունների ճգնաժամի շրջանին՝ 1894—1896 թթ. հայկական կոտորածներին, երբ թուրքական կառավարությանը հաջողվեց տասնամյակների հետևողական աշխատանքի միջոցով քրդերին հանել հայերի դեմ ու մասնակից դարձնել վերջիններիս զանգվածային կոտորածներին։ Սակայն հայերի կոտորածներից հետո իսկույն ակնհայտ դարձան երկու լուրջ դժվարություններ։ Դրանցից առաջինն այն էր, որ կոտորածներից փրկված հայերը թալանված էին, նյութապես քայքայված, և այլևս անկարող էին հարկ վճարել, իսկ պետական գանձարանը դատարկ էր։ Ուստի մինչ այդ հայերից գանձող հարկերի մի մասը սկսեցին հավաքել քրդերից, որոնք դրանց անսովոր էին և կառավարության այդ քայլի դեմ ըմբոստացան։ Բացի այդ, սուլթանը վախենում էր, որ իր տված զենքը քրդերը կարող են ուղղել հենց իր դեմ։ Այդ իսկ պատճառով Աբդուլ Համիդը սկսեց քրդերին իր ձեռքում պահելու միջոցներ փնտրել։ Նա նախ փորձեց քրդերին զինաթափել, բայց վերջիններիս դիմադրության պատճառով այդ չհաջողվեց։ Այնուհետև, քրդական ցեղապետների որդիներին զինվորական ծառայության կամ կրթություն ստանալու պատրվակով հավաքեց Կ. Պոլսում, որտեղ նրանք պահվում էին որպես պատանդ։ Դրանից զատ, կառավարության գործակալները շրջում էին քրդերի բնակավայրերում ու նրանց մեջ բորբոքում ցեղային թշնամություն, իրար դեմ հանում աշիրեթություններին։ Քրդական ցեղերի միջև թշնամություն ու կռիվներ հրահրելը սուլթանի գործելակերպն էր, որը քրդերին հնարավորություն

չէր տալու բաղաքական այլ խնդիրների մասին մտածել։ Բացի այդ, նկատի ունենալով միջցեղային կռիվների իրական վտանգը, քուրդ աշիրեթությունները ստիպված էին լինում հլու-հնազանդ հպատակվել կառավարությանը, որպեսզի այդ բախումների ժամանակ կառավարությունն իրենց հովանավորեր։

Թուրքական կառավարության կողմից գործադրվող այս միջոցները, անկասկած, հետապնդում էին նաև քրդերին գրգռելու, նրանց հայերի դեմ հրահրելու նպատակը։ Այսինքն՝ քրդերի դեմ գործի դրվեցին ճնշման ոչ միայն սոցիալ-բաղաքական, այլև տնտեսական միջոցներ։ Բիթլիսում ռուսական հյուպատոս Ն. Շիրկովը Թուրքիայում ռուսական դեսպան Ի. Զինովևին 1905 թ. մարտի 14-ին ներկայացրած զեկուցագրում նշում էր. «Բիթլիսի վալիի կարգադրությամբ ընթացիկ տարում բոլոր ուրիշ թուրքահպատակների նման քրդերից ևս գանձվել են հարկեր...։ Մինչև այժմ երբևիցե հարկ չմուծած քրդերի մի մասն այդ առիթով իր դժգոհությունը հայտնեց, իսկ որոշ ցեղեր, վախենալով հետագա ճնշումներից, որոշեցին բնակություն հաստատել Պարսկաստանում»[1]։ Այս ամենը, իհարկե, էլ ավելի ծանրացրեց հայերի վիճակը։ Ապօրինի հարկերն ու տուրքերը եռապատկվեցին։ Հայերը ստիպված էին հոգալ նաև քուրդ աղայի ծառաների նյութականը։ Ցեղապետերն ամենօրյա ընդհարումների ու կռիվների մեջ էին, և նրանցից յուրաքանչյուրը պահում էր հազարավոր ծառաներ, բոլորին տալով հագուստ, ձի, զենք, ուտեստ։ Այսպես, Ջալալէդդինի որդի Սեյիդ Ալին ուներ զենքի սեփական արհեստանոց։ «700-ից ավելի զինված ու անզեն քրդեր անոր ծախքով կապրին, այդ ամբողջ ծախքերը վճարողը գյուղացիներն են»[2]։ Միայն Խիզանում Սեյիդ Ալին 17 հայաբնակ գյուղերի տիրացավ և դրանց հայ բնակիչներին ցիր ու ցան արեց։ «Կոտորածեն առաջ... մին մի հայաբնակ գյուղ 2406 ոչխար կպահեր, այժմ շեյխ Սեյիդ Ալիին շնորհիվ շատերն ավերակ դարձած են և մնացյալներում ամենահարուստ գյուղը 200-ե ավել ոչխար չի պահել։ Սոսկալի մոլեռանդ է, շատ եկեղեցիներ իր հոր պես ախոռի վերածած է»[3]։ Նա ամեն ինչ անում էր Խիզանի ամբողջ շրջանը քրդացնելու համար. «սպանություններ, բռնաբարություններ... աչքի ընկնող երիտասարդներին և անչափահասներին ամեն տարի սպանությամբ տասնորդում է։ Տղամարդուն, կնոջը աշխատեցնում է հնձելու, փայտահանության, շինարարության, կալի, փոխադրության և այլ գործերում։ Շատ դեպքերում... 7—8 ժամ ճանապարհ, բեռնված ձյունի վրա քայլեցնելով, գուլպաներն ու տրեխները հանելուց հետո, այդպես բոկոտն ձյունի կույտերը կոխկրտել կտա... ինքն էլ, ի տես այդ թշվառների ցրտահար սրսռալուն, զվարճանում է իր մարդկանց հետ։ Սրբապղծում է բոլոր կրոնական սրբությունները և եկեղեցիները, և, սակայն, շեն մնացած երեք վանքերը... աշխատում է յուրացնել՝ հալածելով վանականներին և շրջակա հայ բնակչությանը»[4]։

Ամենուրեք իշխում էր հայկական հողերին տիրանալու և հայերին տեղահանելու մտայնությունը։ 1901 թ. հոկտեմբերի 20-ի իր զեկուցագրում ահա թե ինչ է գրում Վանի փոխհյուպատոս Ա. Տումանսկին. «Այդ քաղաքականության վարման ձևերը շատ պարզ են։ Այսպես, հայերից գանձվող հարկերի վճարման ժամկետը երկարացվում է, ապա վարկատուի իրավունքը հանձնվում է որևէ մահմեդականի, որը և փաստորեն դառնում է այդ հողի տերը։ Սա ամենախաղաղ ձևն է։ Հյուսիսային շրջաններում, ուր քրդերն ունեն համիդիե հեծելազոր, ամեն ինչ կատարվում է ավելի հեշտ։ Քուրդ աղան հայերին ուղղակի վռնդում է այն հողերից, որոնք իրեն անհրաժեշտ են»[5]։

---

1 Архив внешней политики России (далее АВПР), оп. 482, д. 539.

2 Դրոշակ, 1902, № 11։

3 Նույն տեղում։

4 Հնչակ, 1904, № 3։

5 АВПР, ф. «Посольство в Константинополе», оп. 51, д. 1587.

Թե ինչպես էին հայկական գյուղերն անցնում թուրք աղաների ձեռքը, ցույց է տալիս նաև Թրպատի գյուղի օրինակը։ Սատուն անունով մի աղա ուզում էր այդ գյուղին տեր դառնալ։ Դրա համար նա անընդհատ գողեր ու ավազակներ էր ուղարկում Թրպատի ու թալանում։ Գյուղացիները դիմում են իշխանություններին և խնդրում զինվորներ տալ՝ գյուղը պաշտպանելու։ Զինվորներ տրվում են, սակայն նրանք իրենք էին թալանում ու բռնություններ գործում։ Այլ ելք չունենալով, գյուղացիները գիմում են Սատուն աղային՝ տեր դառնալ գյուղին և այն ասպատակություններից պաշտպանել, խոստանալով, որ «իրենք իբրև ստրուկ մշակեն այդ հողերը»[6]։

1905 թ. կազմված մի զեկուցագրում նշվում է, որ շատ գավառներում գյուղերը դատարկվում են հայերից և նրանց տեղը գրավում են քրդերն ու թուրքերը։ Շատ գյուղեր բռնի մահմեդականացվում էին։ Վանից ևս գրում էին, որ հայերին իրենց բնակավայրերից քշելով նրանց տեղում քրդեր են բնակեցնում. «Հայոց ձորի արդեն մի քանի գյուղերում, որոնք զուտ հայկական էին, մոտերս եկել և բնակություն են հաստատել քուրդ ընտանիքներ»[7]։ Բարձր Դռանը Սզերդից գրում էին, որ «աշիրեթությունների կողմից սպանվածների թիվ ու հաշիվ չկա, քրդերի կողմից ամեն ժամ և ամենուրեք համարձակորեն գործադրած զանազան չարագործությունների հետևանքով քրիստոնյաներն այլևս իրենց կյանքի, փողի, ունեցվածքի, պատվի տերը չեն։ Չարագործների կողմից ճանապարհները բռնած լինելու պատճառով ներմուծությունն ու արտահանությունը դադարել է։ Գյուղերի բնակչությունն էլ քրդերի ճնշման տակ այլևս անկարող է ցանքերը հավաքել»[8]։

Դրությունը մի փոքր այլ էր Սասունում։ Վանի փոխհյուպատոս Տումանսկին գրում էր. «քրդերն այստեղ չունեն համիդիե հեծելազորին հատուկ արտոնություններ։ Սակայն, դրա փոխարեն, այստեղ գոյություն ունի խաֆիր կոչվող սոցիալ-իրավական կազմակերպությունը։ Դա, փաստորեն, ճորտատիրական կախում է քրդերից։ Համաձայն այդ կազմակերպության, ամեն հայ պատկանում է մի որևէ քրդի և պարտավոր է ամեն տարի իր տիրոջը տալ մի եզ կամ կով, ոչխար, այծ, բուրդ, մի զույգ գուլպա, մի զույգ կոշիկ (չարուխ) և քսան պիաստր փող։ Ամուսնության ժամանակ օժիտի մեծ մասը տրվում է աղջկա ընտանիքի տիրոջը։ Անհրաժեշտության դեպքում քուրդ տերը կարող էր վաճառել իր խաֆիրին։ Եթե որևէ քուրդ սպաներ ուրիշի խաֆիրին, սպանվածի տերը կարող էր վրեժխնդիր լինել սպանելով առաջինի խաֆիրին։ Այս նույն փոխադարձության օրենքը գործում էր նաև կողոպուտի դեպքում»[9]։

Քուրդ պատմաբան Քեմալ Մազհար Ահմեդը, վկայակոչելով ակադեմիկոս Վ. Գորդլևսկուն, գրել է. «Առաջին աշխարհամարտից առաջ և հետո Արևմտյան Հայաստանում հայ գյուղացին գտնվում էր ստրկական վիճակում, վաճառվում և գնվում էր անասունի նման։ Հարստահարությունները և նրա աշխատանքի արդյունքների կողոպուտն առօրյա երևույթներ էին։ Հայ գյուղացին մտահոգված էր լոկ իր ֆիզիկական գոյությունը պահպանելու մասին»[10]։ Այսպիսին էր իրավիճակը, այսպիսին էին օսմանյան կառավարության վարած քաղաքականության արդյունքները։ Սակայն գնալով սուլթանի հաշիվները խառնվեցին։ Կ. Պոլիս պատանդ տարված քուրդ աշիրեթապետերի որդիները, ստանալով կանոնավոր կրթություն և շփվելով Կ. Պոլսի ազատամիտ տարրերի հետ, վարակվեցին ազգային ձգտումներով, որի դեմ այնքան կատաղի կռվում էր թուրքական կառավարությունը։ Այդ երիտասարդները, մի կողմից, մոտիկից ծանոթանալով համիդյան կառավարության այն մթին նպատակ-

---

6 Դրոշակ, 1903, № 3։

7 Նույն տեղում, 1904, № 1։

8 Նույն տեղում, 1903, № 5։

9 АВПР, ф. «Посольство в Константинополе», оп. 51, д. 1587.

10 Քեմալ Մազհար Ահմեդ, Քրդոստանը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Բաղդադ, 1977, էջ 243 (արաբերեն)։

ների հետ, որոնք իրագործելու համար այնքան տխուր ու անպատվաբեր դեր պիտի խաղային իրենց ցեղակիցները, մյուս կողմից, սերտ հարաբերություններ ունենալով Կ. Պոլսի առաջադիմական շրջանների հետ, հղացան մի միտք, որ առաջներում անիրագործելի երազ էր թվում։ Դա «Ազատ Քրդստանի» գաղափարն էր, որը մի խումբ քրդերի քաղաքական դավանանքը դարձավ։ Ճանկանալով իրենց գործունեության վայրը տեղափոխել հայրենիք, նրանք սկսեցին մտածել այնտեղ վերադառնալու մասին։ Սակայն կառավարության ձեռնարկած միջոցների հետևանքով շատ քչերին, այն էլ գաղտնի, հաջողվեց հայրենիք մտնել։ Այստեղ «Ազատ Քրդստանի» գաղափարը շուտով ունեցավ մեծ թվով հետևորդներ։ Այս շարժման մեջ առաջատար դեր էին խաղում Բեդիր խանն ու նրա որդիները, որոնցից մեկն արտասահմանում սկսեց հրատարակել «Քուրդիստան» թերթը։ Որոշ ժամանակ անց շարժման գլուխ անցավ շեյխ Իոբեյդուլայի որդի շեյխ Սադրը, որի անկախ կեցվածքը շատ էր անհանգստացնում կառավարությանը։ Նա հայդուկների հետ հարաբերությունների մեջ մտնելու նշաններ էր ցույց տալիս։ «Քուրդը,—գրում էին հայ հասարակական գործիչները,—հայի ամենալավ դրացի ու դաշնակիցը կարող է լինել, եթե միայն նրա մեջ հնարավորին չափով լայնորեն մուտք գործի ինքնաճանաչման ու անկախության ոգին»[11]։

1901 թ. Բեդիր խանի որդի Աբդուլ Ռահմանը, որը «Քրդստան» թերթի խմբագիրն էր, քրդերին դիմեց հետևյալ կոչով. «Դուք վաղուց ի վեր ձեր քաղաքականությամբ ամեն մի տեսակ առաջընթացից, գիտության բարիքներից, ազատության երջանկությունից զրկող ու նենգորեն գործադրված չարագործություններով աշխարհի առաջ ձեր վարքն ու պատիվը վերջնականապես արտավորող Աբդուլ Համիդին ու նրա բռնակալ պաշտոնյաներին ծառայելուց բացի ուրիշ բան չեք անում...։ Մի քանի անպաշտպան հայերի սպանելով չէ՞ որ դուք քանդում եք ձեր հայրենիքը և ձեր օջախը...։

...Դուք, որպես ցեղակից և նույն երկրի զավակ, պարտավոր եք հայերի հետ բարեկամաբար ապրել և այդ բնական անհրաժեշտության շնորհիվ չէ՞, որ դարեր շարունակ նրանց հետ հաշտ ու խաղաղ եք եղել։

Դուք դեռ չե՞ք ձանձրացել ձեր վրա իշխող պաշտոնյաների ձեռքին հափշտակության, ավազակության և մարդասպանության գործիք լինելուց»[12]։

Քրդական առաջադիմական շրջանների ջանքերն անարդյունք չէին մնում։ Դրանք օգնում էին քուրդ ազգաբնակչության մտածողության զարգացմանը, պարարտ հող ստեղծում ազատագրական գաղափարների տարածման համար։ Այդ ջանքերը նկատելի դեր էին խաղում նաև հայ-քրդական համերաշխություն ստեղծելու գործում։ Ճիշտ է, բազմաթիվ պատճառների հետևանքով այդ համերաշխությունը մեծ դժվարություններ հաղթահարելով և վարանելով էր ճանապարհ հարթում, բայց իրողություն է այն, որ 1901—1904 թթ. ընթացքում եղան այդ համերաշխության դրսևորման մի շարք փաստեր։ Այսպես, օրինակ, 1904 թ. մարտի 20-ին Քղիից գրում էին, որ «Խափու հայաբնակ գյուղում տեղի հայերն ու Հայդար բեյի ղեկավարած քուրդ ցեղը միասին դուրս եկան քուրդ ավազակների դեմ և նրանց փախուստի մատնեցին։ Հայդար բեյը հայտարարեց. «Մենք, զազա ցեղերս, թուրք կառավարությանը ո՛չ տուրք, ո՛չ զորք կտանք և ոչ էլ կուզենք կառավարության ձեռքը գործիք դառնալ և ճնշել մեր դրացի հայերին»[13]։

Քուրդ-հայկական հարաբերությունների մերձեցմանը զգալի չափով նպաստեց հայդուկների ակտիվ գործունեությունը և քուրդ աշխատավորության լայն շրջաններում նրանց հեղինակության աճը։ Բիթլիսի ռուսական փոխհյուպատոս Ն. Շիրկովն իր զեկուցագրում նշում էր, որ «չի կարելի լռություն մատնել հայ հեղափոխականների և քրդերի միջև բարի դրացիական հարաբերությունների ստեղծման փաստերը։ Դա արտահայտվում է այն իրո-

---

11 Հնչակ, 1903, № 10—11։

12 Դրոշակ, 1901, № 6։

13 Նույն տեղում։

ությամբ, որ Բիթլիսի վիլայեթի որոշ կետերում քուրդ աղգաբնակչությունը հյուրընկալել է ֆիդայիներին, նրանց ճանապարհ է ցույց տվել, ապահովել պարենով»[14]։

Սակայն քրդերի վարքագիծն անհնար է միանշանակ արժեքավորել։ Դրա հիմնական պատճառն այն է, որ քրդերը, որպես ազգ, դեռ ձևավորված չէին և նրանց կողմից համազգային վերաբերմունքի և քաղաքականության մասին խոսք լինել չէր կարող։ Ուստի պատահական չէր, որ կային աշիրեթություններ, որոնք հայերի հետ հաշտ ու խաղաղ էին, իսկ կային նաև այնպիսիք, որոնք հայերի կատաղի թշնամիներն էին։ Նստակյաց քրդերը ձգտում էին հայերի հետ հաշտ ապրել, իսկ քոչվոր ցեղերը, ընդհակառակը, առիթ էին որոնում հայերին թալանելու։ Շատ քրդեր երկընտրանքի մեջ էին։ «Տատանման մեջ են և քուրդ աղաները,—գրում էին Բայազետից,—ինչպես անել, չգիտեն։ Նրանց հրամայում են անց կենալ իրենց միս ու արյուն տվող, իրենց խնամող ու կերակրող հայից, օջախը մարելով անց կացնել, քանդել նրա ամբարը ու մեռցնել նրան ընդմիշտ»[15]։

1903 թ. հուլիսի 3-ին Ախլաթից ստացված նամակում բերված են քրդերի վարքագծի տարընթացության բնորոշ օրինակներ։ «Ամսույս 15-ին խումբ մը ֆիդայի կտեսնվի հայ գյուղերեն միույն մեջ»[16]։ Տեսնողները երկու քուրդ էին։ Նրանցից մեկը շտապում է իշխանությունների մոտ, իսկ մյուսը գյուղ՝ հայերին հայտնելու, որ իր ընկերն իշխանություններին լուր է տարել։ Դրա շնորհիվ հայդուկներին հաջողվում է իրենց թաքստոցը փոխել և վտանգից խուսափել։ Մյուս օրը երեկոյան տեղեկացնող քրդի հայրը մի քանի քրդերի հետ այդ նույն գյուղն է գալիս ու հրապարակով հանդիմանում որդուն. «Ֆիդային ոչ ոքի վնաս չհասցներ, քրդու մը վատ խոսք մը չըսեր, ալ ի՞նչն է քեզ այդ վատ արարքին մղող շարժառիթը»[17]։ Քրդերը հայերին հավաստիացնում են, որ այլևս նման բան նրանց կողմից չի կատարվի։

Նույն ամսի 17-ին մեկ այլ գյուղում երկու քուրդ նկատելով հայդուկներին, նրանց վրա կրակ են բացում։ Աղմուկի վրա շրջակա գյուղերից օգնության են հասնում շուրջ 100 քուրդ։ Բայց իմանալով, որ քրդերն են կրակ բացել հայդուկների վրա, նրանց խիստ հանդիմանում են ու ցրվում[18]։

Նախապատրաստվելով հայերի զանգվածային կոտորածներին, Բ. Դուռը շրջավարարվեց Սասունի դեմ բանակային ուժեր կենտրոնացնելով։ Նա արշավի կոչեց մահմեդական բոլոր տարրերին՝ համիդիեներին ու ջանբազարներին, չերքեզներին ու քրդերին։ Ելնելով 1894—1896 թթ. կոտորածների փորձից, առանձնահատուկ ուշադրություն դարձվեց քրդերին հայերի դեմ հանելու խնդրին։ Սուլթանական պալատում այն կարծիքին էին, որ հայկական առաջին զանգվածային ջարդերի ժամանակ հայերի ու քրդերի միջև թշնամությունն այնքան էր արմատացել, որ խնդրի լուծումն առանձին ջանքեր չի պահանջի։ Սակայն Կ. Պոլսում սխալվում էին։ Ճիշտ է, 1894—1896 թթ. ջարդերից հետո հայերի ու քրդերի միջև հարաբերությունները, իրոք, սուր տեսք ստացան, բայց դրա հետ միասին քրդական ավելի ու ավելի լայն շրջաններ էին համոզվում, որ հայերի կոտորածը բխում է ոչ թե քրդերի ազգային շահերից, այլ թուրքական կառավարողների քաղաքական նպատակադրումներից, որոնք ի վերջո ուղղվելու են նաև քուրդ ժողովրդի դեմ։ Բացի այդ, երբ թուրքական հրամանատարությունը դիմեց քրդերին, որ մասնակցեն Սասունի վրա հարձակմանը, «մի քանի աշիրեթներու պատասխանը շատ կտրուկ և խելացի եղած է։ Անոնք ըսած են. «Ասկե առաջ ալ մեզի դրդեցիք այդպիսի մը ընելու, սակայն երբ եվրոպացի քննիչներն եկան, ամբողջ պատասխանատվությունը մեր վրա ձգեցիք, իբր, թե ինքնագլուխ ըրած ըլլայինք

---

14 АВПР, ф. «Политархив», оп. 482, д. 539.

15 Դրոշակ, 1902, № 11։

16 Նույն տեղում, 1903, № 7։

17 Նույն տեղում։

18 Նույն տեղում։

այդ գործը։ Ու եթե հայերու ցուցմունքը չըլլար, թե քրդերը չէին, այլ զորքերը, եվրոպացին մեզ այժմ ջնջած կըլլար»[19]։

Ճշմարտությունն այն է, որ ամբողջությամբ վերցրած, քրդերի ազգային շահերը հակադիր էին օսմանյան տիրապետության գոյության բուն փաստին։ «Քրդերը,—գրում էր գերմանացի հետազոտող Շվեյգեր-Լենխերվելդը,—թշնամաբար են վերաբերվում թուրքերին։ Ամեն ինչից երևում է, որ նրանք, ինչպես թուրքերին հպատակ ժողովուրդների մեծ մասը, ձգտում են անջատվել, և, որ նրանք սպասում են առաջին իսկ բարենպաստ պահին՝ ապստամբելու»[20]։ Իսկ ֆրանսիացի Ռեկլյուն նկատում էր, որ անցյալ դարի կեսից սկսած «քրդական ապստամբություններից շատերը, անշուշտ, նպատակ ունեին ձեռք բերելու քաղաքական անկախություն։ Մինչև անգամ փորձեր եղան ստեղծելու «քրդական դաշնակցություն»[21]։

1900 թ. դեկտեմբերին Վասպուրականից գրում էին. «Թուրքն ու քուրդը բարեկամ և դաշնակից լինել չեն կարող։ ...Քուրդը ազատ ու անկեղծ, իր լեռների նման կոշտ ու վայրենի, սովոր ավարառության և հափշտակության, ասպետական դյուցազնականությամբ հիացող, անհնար է, որ համակերպվի, մանավանդ ենթարկվի թուրքին...

Տեղի թուրք քաղաքացիների ու զինվորականների մեծամասնությունը արդեն սկսել են անհաշտ աչքով նայել համիդիեներին, մանավանդ զինվորականները, երբ տեսնում են, որ իրենց կողմից արհամարհված, բոլորովին ագեա և զինվորական կանոնավոր կրթությունից զուրկ քրդերը իրենց հավասար կամ նույնիսկ իրենցից բարձր պաշտոնների են հասել։ Իսկ թուրք գյուղացիները լրիվ դժգոհ են, որովհետև մի շարք գավառներում այժմ իրենք էլ ենթարկված են, հայ գյուղացու նման, քրդական բարբարոսություններին»[22]։

Ասվածից կարելի է եզրակացնել, որ թուրքերի ու քրդերի միջև լուրջ հակասություններ կային։ Այդ հակասությունները հետևանք էին, մի կողմից, քրդերին հարկատու դարձնելու կառավարության որոշման, մյուս կողմից՝ համիդիե գնդերի գործողությունների դեմ օսմանյան հասարակության տարբեր խավերում առաջացած դժգոհության։ Ահա այս հիմքի վրա նկատվում էր քուրդ-հայկական հարաբերությունների ոչ միայն մեղմացում, այլ այդ երկու ժողովուրդների մեջ ձգտում էր առաջանում մերձենալու, միասնական ճակատ կազմելու ընդդեմ օսմանյան տիրապետության։ Դա անհանգստացրեց իշխանություններին, և նրանք ստեղծեցին «ջանբեզարների կուսակցությունը», որի մեջ հավաքագրեցին հասարակության թափթփուկներին և դրանց ուղղեցին բոլոր ընդդիմադիր և վստահություն չներշնչող ուժերի դեմ՝ լինեին թուրք, քուրդ, թե հայ։

Օսմանյան կառավարությունը խորամանկում էր, ազգամիջյան թշնամություն բորբոքելու հնարանքներ էր փնտրում։ Դրա համոզիչ վկայությունն են 1903 թ. հունիսի 3-ին Բայազետից ստացված նամակի հետևյալ տողերը. «Վերջին ժամանակներս համիդիե ավազակները տեսնելով, որ վերջին ծայր չքավորության հասած հայ գյուղացիների մոտ թալանելու, կողոպտելու այլևս ոչինչ չի մնացել, խրախուսված կառավարության ձեռնապահությունից դեպի քրդերի արարքները, իրենց շահարկությունները սկսեցին տարածել նաև խաղաղ թուրք ազգաբնակչության վրա։ Ավարառություններն այնքան շատացան, որ թուրքերն այլևս չկարողանալով տանել քրդական հարստահարությունները, 60 գյուղ միացյալ բողոքի հեռագրեր ուղարկեցին։ Իշխանությունները նման առիթ էին սպասում և զորքեր լցրեցին գյուղերը, որոնք ձևի համար խլեցին մի քանի պատահական քրդերի զենքերը, այդպիսով

---

19 Նույն տեղում։
20 Նույն տեղում։
21 Նույն տեղում։
22 Նույն տեղում, 1901, № 8։

քրդերի մեջ առաջ եկավ մի ուժեղ, բայց խուլ դժգոհություն»[23]։ Քրդերը ոկսեցին զանազան սպառնալիքներ տեղալ իշխանությունների գլխին, նրանք նաև սպառնում էին միանալ «ջանֆիդաներին»։ Դա վախեցրեց իշխանությունները և գյուղերում «ցրված հեծելազորի սպաները շատ քրդերի մոտ խոստովանել էին, թե նրանք նշանակված են իսկապես հայերի համար, որ թուրքերի բողոքը միայն պատրվակ էր և քրդերից մի քանի զենք առնելը՝ միայն խաբելու միջոց»[24]։

Սակայն համիդիե գնդերի չարագործությունների դեմ դժգոհությունները գնալով համընդհանուր էին դառնում։ Երկրի բոլոր ծայրերից անընդհատ բողոքներ էին ստացվում, և այդ հանգամանքը սուլթանին հարկադրեց խնդիրը լուրջ քննարկման նյութ դարձնել։ Բայց իրականում այդ բողոքները չէին սուլթանի անհանգստության գլխավոր պատճառը։ Սուլթանը շարունակում էր քրդերին սիրաշահելու և նրանց հայերի դեմ ուղղելու քաղաքականությունը։

1903 թ. մայիսի 21-ին Վանից գրում էին, որ Հուսեին փաշան. «իր ծառաներուն կպատվիրե երթալ շրջակա բոլոր հայ գյուղերը, եկեղեցիներն ու վարժարանները քանդել, ավերել և անոնց վրա եղած բոլոր փայտերն ու դերանները գյուղացոց շալակը տված բերել քրդական ավերակ գյուղերը նորոգելու»[25]։ Մեկ տարի անց՝ 1904 թ. ապրիլի 14-ին, Վանից այդ նույն ավազակի մասին գրում էին. Ալշավիսում (Վասպուրական) համիդիեի ավազակապետ քոռ Հուսեին փաշան «երկար տարիներից ի վեր տեղի հայերը կողոպտելուց, սպանելուց և մելիքների դարավոր ընտանիքները քանդելուց, ոչնչացնելուց հետո, այս անգամ մի քանի հայ գյուղեր հայերից լրիվ դատարկելով, գրավեց, որտեղ քրդեր տեղափոխելով, իր համար տներ է կառուցել տալիս։ Եվ որպես վարձատրություն իր արածներին, վերջերս տեղի գավառի գայմաքամ ընտրվեց, իր չարագործությունները, անկասկած, պաշտոնապես էլ նվիրագործելու համար»[26]։

Մյուս կողմից, խստագույն պատիժների էին ենթարկվում այն քրդերը, որոնք հայերի հետ լավ հարաբերությունների մեջ էին։ Հասնանցի Ֆատեհ աղան ձերբակալվեց «հայերի հետ հարաբերություն ունենալու համար»[27]։ «Կառավարությունը հալածում է նույնպես համիդիեի գայմաքամ Ալի բեյին... դա էլ որպես թե հայերին համակրում է»[28]։

Թուրքական կառավարության ձեռնարկած այս և մի քանի այլ միջոցները, անշուշտ, քրդերի կողմնորոշման գործում որոշ դեր խաղացին։ Բայց ո՞չ գլխավոր և ոչ հիմնական։ Որոնք էին այդ կողմնորոշման հիմնական պատճառները։ Ինչո՞ւ քրդերը բարձրացան հայերի դեմ։ Քուրդը քոչվոր խաշնարած էր և անասնապահական մթերքներ իրացնելու միջոցով իր կարիքների գոնե նվազագույն չափը բավարարել չէր կարող և դրանով փաստորեն չէր էլ զբաղվում։ Նա գերադասեց թալանի ուղին։ Իսկ թալանելու առարկան հայն էր։ Քուրդը բացի ցեղ հասկացողությունից, համակերպության ոչ մի այլ տեսակի մասին գաղափար չուներ. «ցեղակից» և «այլացեղ» բառերը նրա համար հոմանիշ էին «բարեկամ» և «թշնամի» բառերին։ Նրա ռազմական կազմակերպությունը հլու-հնազանդ էր ցեղապետի կամքին և վերջինս իր եսասիրական շահերին կարողանում էր տալ համացեղալին շահի տեսք ու քրդերին քշել ավերելու և թալանելու։ Փոքր չէր նաև կրոնական մոլեռանդության դերը։ Շվեյգեր-Լենխերվելդը ձևակերպում է հայ-քրդական թշնամության մի այլ պատճառ։ «Որպեսզի քրդերը հեռու մնան անկախության ձգտումից, կառավարությունը աշխատում է նրանց զբաղեցնել ուրիշ խնդիրներով։ Այսպես, օրինակ, նա քրդերին դրդում է Քրդստանում բնակ-

23 Նույն տեղում, 1903, № 6։

24 Նույն տեղում։

25 Նույն տեղում։

26 Հնչակ, 1904, № 5։

27 Դրոշակ, 1904, № 1։

28 Նույն տեղում։

վող նեստորականների դեմ, ինչպես նաև մահմեդականներին զինում է քաղդեացիների դեմ, իսկ վերջիններիս՝ եզդիների ու քրդերի դեմ։ Նա այդպիսով առաջ է բերում խռովություններ այն միակ նպատակով, որ իր ձեռքում պահի գերագույն իշխանությունը... և հպատակ ազանդները չմիավորվեն ընդհանուր թշնամու դեմ»[29]։

Քրդերին հայերի դեմ լարելու համար մեծ ակտիվությամբ օգտագործվում էր սուլթանի հորինած այն կեղծիքը, թե հայերն ուզում են տեր դառնալ կայսրության արևելյան և հարավարևելյան տարածքներին, որ նրանք չեն ընդունում Քրդստանի գոյությունը, և այն ցանկանալով մտցնել Հայաստանի կազմի մեջ, ձգտում են քրդերին ռայա դարձնել, և որ քուրդ ժողովրդի գոյատևումը հնարավոր էր միայն Հայկական բարձրավանդակում։ Սուլթանին դա հեշտությամբ էր հաջողվում նաև այն պատճառով, որ այդ երկու ժողովուրդների քաղաքական ազդեցիկ ուժերը միամիտ և անհեռատես, մեկը մյուսին մերժող քաղաքականություն էին վարում։

Խոսելով հայ-քրդական հակասությունների մասին, Քեմալ Մազհար Ահմեդը դրանց պատճառներից մեկը համարում է այն, որ հայ քաղաքական կուսակցություններն «այդ ամբողջ տարածքը հայկական էին համարում»։ Նա հիշում է քուրդ բանաստեղծ Հաջի Կադր Քոխի հետևյալ խոսքերը. «ավաղ, քրդերի երկիր Ջեզիրեն և Բոհթանը հայկական երկիր են դարձնում...»։ Այդ նույն ժամանակ քուրդ քաղաքագետներն Արևմտյան Հայաստանն ամբողջությամբ Քրդստանի հողերն էին համարում։

Դժվար է չհամաձայնվել Քեմալ Մազհար Ահմեդի հետևյալ մտքի հետ. «Երկու ժողովուրդների քաղաքական գործիչների անհեռատեսությունը, ինչպես նաև կառավարության և օտար տարրերի հրամանները դարձան հայերի և նրանց հարևան քրդերի ազգային անհամաձայնության պատճառը, որից թշնամին քաղեց իր օգուտները»[30]։

Այսպիսին է դարասկզբի հայ-քրդական հարաբերությունների պատկերը։ Ցավոք, քուրդ ժողովուրդը շարունակեց խաղալ այն կույր գործիքի դերը, որ նրան բաժին էր հանել օսմանյան կառավարությունը։ Դա էր, որ քրդերին մեղսակից պետք է դարձներ Մեծ եղեռնին։ Քրդերը գնացին պատմական մի ուղիով, որի ողբերգական լինելը կանխագուշակում էին ոչ միայն հայերը, այլև քուրդ առաջադեմ խավերը։ Հետո եկավ քրդերի հերթը։

АРМЯНО-КУРДСКИЕ ОТНОШЕНИЯ В НАЧАЛЕ XX В.

К. С. ПОГОСЯН

Резюме

Говоря об армяно-курдских отношениях в исследуемый период, нельзя забывать, что ему предшествовал период кризиса этих отношений—резня 1894—1896 гг., когда турецкому правительству в результате многолетних усилий удалось поднять курдов против армян. Эта политика с переменным успехом давала плоды и в последующие годы, чему в немалой степени способствовала недальновидность большинства армянских и курдских политических деятелей. Курды продолжали играть ту роль слепого орудия, которое предопределено было турецким правительством. Это в конечном итоге и сделало курдов соучастниками великого преступления—геноцида 1915 года. Это стало источником трагедии курдского народа.

29 Նույն տեղում, 1900, № 12։

30 Քեմալ Մազհար Ահմեդ, նշվ. աշխ., էջ 262։

ARMENIAN-KURDISH RELATIONS AT THE BEGINNG OF THE XX CENTURY

K. S. POGOSIAN

S u m m a r y

The period under serutiny in the Armenian-Kurdish relations had been proceeded by a spell of crisis-the massacre of 1894—1896 when the Turkish goverenment's relentless long-time efforts succeeded in raising the Kurds against Armenians. The variable success of thighs potitics in subsequent years was largely promoted by the short-sighted views of most Armenian and Kurdish political figures. Thd Kurds continued to perform the role of the blind instrument activated by the Turkish government, the origin of tragedy for the Kurdish nation.